ցմիշտ մաղլցելով բարձրանալու ստիպուած էի և երբեմն գլորուելով, նաև զգուշացած էի սահուն սէզի վերայ ոտք դնելէ, որ մի գուցէ սահելով կտոր բրդուած լինիմ։ Այս վերելութեան մէջ տեղ տեղ պատահելով փոքրիկ անտառակներու, մարմարիոն քարի կրտորներու, վայրենի ոչխարաց խմբերու. արդէն 2 ½ ժամ անցած էր, բարձրացած էինք մի վայր, քրտինքը մեր հագուստներէն ևս կը կաթէր. հովը սկսաւ մեր երեսին զարնել. այս տեղ Ղլիճ կետուկայ շղթային մէջ ամենաբարձրն էր, տեսարանը աւելի տարածուած էր այժմ, ամբողջ Բազրևանդ մեր հիւսիսն և արևելեան հիւսիսն կերևեր իւր լեռներով՝ նաև ի հարաւ՝ Անդափի և Պանազկերտի լեռներն, որոց ետևն բարձրացած էր Սիփան. մեր ուղղակի յարևելս Նպատ, յարևմուտս Պերկեմիր, ի հիւսիս Սուկաւէտ։ Սիփան, Պասիս և Սուկաւէտ կերևին հանդէպ իրարու և յարևելից ասոնց վերայ բարձրացած է հսկայ լեառն Պասիս, որք գրեթէ իրարմէ երկու երկու աւուր ճանապարհ հեռի են։

—Ս. Գէորգ, ըստ աւանդութեան ժողովրդեան Ս. Սուքիասանց ընկերներէն մին էր։ Երբ Սուքիասանք Աղատաղ (ծաղկանց) Սկեանցմէ բաժանուեցան, լեռնէ լեռ մինչև այս վայրը եկան, այս տեղ հիւանդացաւ, մնաց, Ս. Գէորգ, ունենալով իւր մօտ մի ընկեր, մնաց ժամանակ մի այս տեղ, միւս ընկերներն գնացին, Սուկաւէտի կողերուն վերայ հաստատուեցան։ Ս. Գէորգ այս տեղ մեռաւ, թաղուեցաւ, իւր ընկերը իջաւ Խաստուր քաղաքն, հասու լինելու համար Սուքիասանց բնակութեան վայրի վերայ՝ Խաստուրցիներէն հարցում արաւ և ընկաւ ճանապարհ, գնաց։ Այս միջոցին զՍուքիասեանս որոնող բռնաւորն եկած՝ խուզարկութիւն կանէր Սուքիասեանց վերայ, Խաստուրցիք յայտնած են, բռնաւորն հասած էր Զետրկան գիւղի մօտ Սուրբին և սպանած։ Սուրբը սպանուելու